

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8**

2013թ. մայիսի 31-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 27-ը:

Օրակարգ՝

1.Բարձրագույն կրթության ոլորտում կրթական փոփոխությունների նախաձեռնման և իրականացման արդի գործընթացի ներկայացում:

/զեկ՝ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյան/

2.Ակադեմիական քաղաքականության վարչության հաշվետվության ներկայացում:

/զեկ՝ վարչության պետ Ա.Ա.Ղարիբյան/

3.ԳՊՀ ԲՆՖ ամփոփիչ ատեստավորման արդյունքների և զարգացման հայեցակարգի դրույթների կատարման ընթացքի ներկայացում:

/զեկ՝ ԲՆՖ դեկան Մ.Պ.Ավագյան/

4.Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա ներկայացրեց բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների հիմնական գործընթացները, անդրադարձավ Tempus lamanch ծրագրին, նշեց, որ 29 բուհ միավորվել է՝ բարձրագույն կրթության ոլորտում փոփոխություններ նախաձեռնելու համար, որի նպատակը պետք է լինի նոր սերնդի համալսարանի ձևավորումը: Նոր սերնդի համալսարան դառնալու համար պետք է պատասխանել մի շարք հարցերի. Բուհի առաքելությունը հստակ է, բուհի որդեգրած արժեքներն ընդունելի՞ են, բուհն ունի՞ հանրության վստահության պաշար, արդարացնո՞ւմ է շահառուների ակնկալիքները, ապահովո՞ւմ է բուհի և գործատուների հետադարձ կապը: Բարձրագույն կրթության ոլորտում կատարվող փոփոխությունները ազգային բարեփոխումների հայեցակարգի բաղադրիչներից է, այն պետք է ներառի մտածողության, արժեքների, հմտությունների և կարողությունների ոլորտները: Նոր սերնդի համալսարանի արժեքային համակարգը ներառում է դասավանդողների արժեքային կողմնորոշումները, սովորողների և նրանց ծնողների արժեհամակարգերը, հասարակության սոցիալ- մշակութային, տնտեսական, քաղաքական և այլ արժեքներ: Արդի կրթական ծառայությունները պետք է ապահովեն արդյունավետությունը,

բովանդակության մատչելիությունը, ուսանողների ձայնի հաշվառումը, ծառայությունների պատշաճ ձևավորումը: Այնուհետև Ռ. Հակոբյանն անդրադարձավ բարձրագույն կրթությանն ուղղված մարտահրավերներին, կրթական քաղաքականության ուղղություններին և կրթական միջավայրի բաղադրիչներին: Անդրադարձ եղավ նաև Պարկինսոնի, Քոթթերի և Քովի տեսություններին, որոնք վերաբերում են մարդկային վարքագծին, փոփոխություններին և հաջողության հասնելու կանոններին:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ակադեմիական քաղաքականության վարչության պետ Ա.Ղարիբյանը: Նա հանգամանորեն ներկայացրեց վարչության կատարած աշխատանքները տարվա ընթացքում: Ուսումնական պլաններ ու ծրագրեր, ուսումնական բեռնվածքներ, ուսանողների տեղափոխումներ և վերականգնումներ, դեկանատների, ամբիոնների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ տարվող աշխատանքներ. ահա այն հիմնական ուղղությունները, որոնցով իր գործունեությունն է ծավալել ակադեմիական քաղաքականության վարչությունը:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանը ներկայացրեց շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքները և զարգացման հայեցակարգային դրույթների կատարման ընթացքը ֆակուլտետում: Ըստ զեկուցողի՝ ամփոփիչ ատեստավորումն ընթացել է ընդունված կարգին համապատասխան, ուսանողները ցուցաբերել են բավարար գիտելիքներ քննական բոլոր առարկաներից, ուստի հանձնաժողովների նախագահներն ու անդամները գոհ են եղել նրանց պատասխաններից: Ինչ վերաբերում է ֆակուլտետի զարգացման հայեցակարգով նախատեսված դրույթների կատարմանը, ապա այն ընթանում է ծրագրվածին համապատասխան: Նկատված թերությունները ընթացքում շտկվում են:

Ընթացիկ հարցերի քննարկման ժամանակ Ա.Ապրոյանը ներկայացրեց այն անձանց, ովքեր իրենց աշխատանքն ու կրթությունը շարունակելու են արտասահմանյան բուհերում: Թ.Ասոյանը ներկայացրեց Ն.Ղազարյանի «Նարեկացի-Մեծարենց-Սիամանթո-Չարենց կապը» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

Նիստի ավարտին ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանն անդրադարձավ հեռակա ուսուցման դասերի կազմակերպման և անցկացման հարցերին:

Հիմք ընդունելով զեկուցումներն ու ելույթները՝

Որոշեցին՝

- 1.ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:
- 2.Ա.Ղարիբյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3.Մ.Ավագյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4.Ա.Ապրոյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

5.Ն.Ղազարյանի <<Նարեկացի-Մեծարենց-Սիամանթո-Չարենց>> ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան